

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԿՆՈՐ ՕՐԻԻ

ՆԱԿԱՆ ԿԱՐ ԱԵՆԷ ԲՊՊԱԿՈՒԹՅՈՒՆ
ՊԼՏՏ ԵՒ ՈՒՊՂՂԱՆ ԵՍԹ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բարձր
ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Ձեռագիրներն են չեն գործարկը.

ԱՐՏՕՒՍՏԵՐ Ժ. ՄԻՆԵՆԷ

ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵՔՇՆՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳՊՈՒԹԻՒՆ

ԵՊԻԳՏՈՍ

ԴՐԵ. ՈՂՁ

Գանձիկի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայքից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ՌԵՏԱՈՒՇՄԱՆԻ ՉԱՄԱՐ

Տարեկան	»	Ֆրանգ	18
վեցամսեայ	»	»	11

ԲՈՒՍԻՆՅՈՅ ԵՒ ԿՈՂՊԱՍԻ ՉԱՄԱՐ

Տարեկան	»	բուրլի	7
վեցամսեայ	»	»	4

ԲԱԺԱՆՈՐԳՊՈՒԹԻՒՆ ԿԱՆՏՈՒԿ ԵՒ

ԵՒ ԲՊՊԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՏՈՒԿ

Թերթին վարչութեան վրայ է

ԶՈՐԵՔՇՆՐԹԻ 14/27 ՄԱՐՏ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 77

ԺԱՄԱՆՑԸ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԵՋ

Կանոնաւոր, հաճոյալի ժամանց մը, ընկերական զբօսանք մը, միշտ հոգեկան վայելք մըն է մարդոց համար: Ամեն ժամանակի մէջ և ամեն տեղ զբօսանքը մարդոց տաղտուկներուն փարատողը եղած է, և մարդիկ այնքան սիրած են զբօսանքը որքան կեանքը իր հոգեւոր իրենց բովանդակ ոյժը պահանջած է: Ամենէն զէշ կերպով զբօսող հասարակութիւնները եղած են միշտ գէշ աշխատողներ, և անոնք որոնք գործունեայ, արդիւնաւոր կեանք մը ունին, գիացած են նաև բանաւոր զբօսանքներու ամբողջ կազմակերպութիւն մը ունենալ:

Մարդկային զբօսանքներու ատեն, մանաւանդ կինը ամենէն կարեւոր գերբ ունեցած է նախապատմական ժողովուրդներու կեանքին մէջ, և քաղաքակիրթ ընկերութիւններն ալ այսօր կինը կը նկատեն իբր ամենէն կարեւոր իր այդ գերովը: Մեր դարուն ընկերական կազմակերպութեամբ բը, ընտանիքները ամեն տեղ ամբողջութիւն մը կը ներկայացնեն որոնք իրենցմէ դուրս արտաքին աշխարհի վրայ մեծազոյն ազդեցութիւնը ունին: Ընկերութեան մը ամեն անհատներն ալ ընտանիքի մը մէջէն ծագում կ'առնեն, ու իրենց յոյնական տակ կեանքի վերջին հանգրուանն ալ միշտ ընտանիքն է: Պէտք է ուրեմն ընտանիքը այն բոլոր յատկութիւնները ունենայ որոնցմով կողմերը որ մարդկային ընկերութիւն մը օժտուած ըլլայ: Հաստատուած ճշմարտութիւն մըն է թէ այն մարդիկ որոնք ինքզինքնին տակ ընտանեկան ժամանցներու տուած են, բնաւորութեամբ շատ աւելի հեզ ու ազնիւ կ'ըլլան, քան թէ անոնք որոնք գաղիւններու և խառնուրդներու մէջ կուզեն իրենց պարագի ժամանակը ըստ պաննել:

Ընդհանրապէս թէև կարծուած է թէ կինը աւելի կրաւորական էակ մըն է քան թէ մարդը, բայց ըմբռնման տէր և շիփ կիներու հանդէպ են ճիշդ հակառակ համոզումը ունին: Այս վերջիններն են որոնք կրնան ի-

րենց ուղած կերպով ձեռնարկել մարդը, ու նոյն իսկ մարդոց կատարած գործերուն մէջ կնոջ կամքն է յաճախ որ կ'իրագործուի. որքան ճշմարիտ և հոգեբանական է ֆրանսացիներուն «Cherchez la femme»ը:

* *

Այրերը արդէն իրենց կաշուով օրուան միջոցին պէտք է ընտանեկան յարկէն դուրս ըլլան, իսկ ասոր փոխարէն, որպէսզի այրերը իբր իրենց կիներուն ընկերակից չ'օտարանան իրենց ընտանեկան յարկէն, պէտք է որ իրենց զբօսանքի ժամերն ալ ընտանեկան յարկէն դուրս չ'անցընեն: Կինը իր ընտանեկան յարկը իրմով և գաւակներով այն տեսակ վիճակի մը մէջ գնելու է, որով իր ամուսինը իր պարագի ժամերը հաճոյքով ուղէ իրեններուն հետ անցընելու ինչպէս որ անհաճոյ է երբ մարդը կինը իր գործին բոլոր տաղտուկներովը կը զբաղեցնէ, ու ատով ընտանեկան յարկի հաճոյքները կը պղտորէ, նըմանապէս կին մը, իր ամուսինն ներկայութեամբ պէտք է մէջտեղէն վերցուցած ըլլայ այն բոլոր բաները ու ընդ մարդուն տաղտուկ կը պատճառեն: Իսկ ինքը, իբր ամուսինին, պարտաւոր է ամուսնոյն բացակայութիւնը հոգալ այդ բոլորը:

Ես տեսած եմ շատ մը կիներ, ուրոնք իրիկանները, փոխանակ իրենց ամուսնոյն հետ ընկերակցութեամբ ժամանակ անցընելու, կուզեն իրենց ամուսնոյն ներկայութեան օգտուելով զաւակներու ինամբը անոր ձգել, իսկ իրենք, սան կառավարութեան հետ կապ տնեցող իրենց գործերովը ըզրաղել: Այս տեսակ կիները կրնան սպառնալ ըլլալ որ իրենց ամուսինները կը սկսին կամայ կամայ չ'սիրել իրենց ընտանեկան յարկը, իբր ամենէն հաճոյալի ժամանակի վայր մը և իրենց սզատ ժամերը կ'աշխատին իրենց ընտանիքէն դուրս տեղեր անցընել:

Այն ամուսինները որոնք ընտանեկան յարկին տակ կրնան հաճոյալի կերպով իրենց ժամանակը անցընել, երջանիկ ամուսիններ են անոնք, ուրեմն կիները մեծ ոյժ մը ունին ձեռքերին, իրենց ընտանեկան յարկը երջանիկ

կամ դժբաղդ ընելու համար: Նորէն կը շեշտեմ այն կէտը թէ ինչպէս որ մարդուն պարտականութիւնն է ընտանիքի մը բովանդակ նիւթական տաղտուկները ստանլ, նմանապէս կնոջ պարտաւորութիւնն է ընտանեկան յարկը մարդուն հաճելի ընելու բոլոր միջոցներուն վրայ խորհիլ:

Մարդկային հոգին, որ փոփոխուած միտ ստեղծուած է, իր զգացումներուն համար միշտ նորանոր գոհացումներ կուզէ, կինը իր ընտանեկան յարկի ժամանցները ամուսնոյն համար հաճոյալի գործները ուղած ատեն պէտք է նաև ուշադրութեամբ առնէ այս ճշմարտութիւնը:

* *

Մեր ընտանիքներու մէջ ընտանեկան ժամանցներու մասին մեր կիները չեն մտածած անգամ: Այրերը ընտանեկան յարկի մասին միշտ կը գիտնալին, ըսելով թէ հոն աղոց պոտաւորքը, լացը ու կոծը և կնոջ ալ տոգոհանքները պէտք է մտիկ ընել, և շունչ մը կ'առնեն եթէ իրենց բարեկամներէն մէկը առաջարկէ իրենց գաղիւն երթալ և նաբո կամ թուղթ խաղալ:

Ընտանեկան կեանքն ալ զարգացած չէ մեր մէջ ընտանեկան գոյնի տակ, որով բարեկամ, ծանօթ, ազգական ընտանիքներ հաւաքուելով իրար պէս հաճոյալի ժամանցներ, երկուողիներ ունենան:

Հարուստ ընտանիքներու մէջ հաւաքումները բոքերի կամ նման խաղերու համար են ընդհանրապէս, իսկ միջակային դասէն ընտանիքներու մէջ, հաւաքումներու ատեն կիները իրենց մէջ կը սկսին իրենց խօսակցութիւնը, որ իր բովանդակութեամբն ու եղանակովը որ և է շահեկանութեան զուրկ է մարդուն համար, իսկ մարդիկը, իրենց օրուան գործերուն և կամ այն տեսակ ինչիքներու մասին կը խօսին, որոնք իրենց կարծիքով կանացի ըմբռնումն մատչելի չեն: Եւ մեր մէջ այս տեսակ հաւաքումներուն կուսան ընտանեկան հաւաքումներու անունը:

Մեր ընտանիքներու մէջ, ընդհանրապէս, ոչ ամուսնին կողմ ատեն, ոչ ալ հաւաքումներու ատեն չունինք

այն այնքան մարդը, հաճոյալի և անկեղծ ընտանեկան ժամանցները, որոնց համար արիշ պայմաններու ծանօթ անհատներ նախանձով կը նային օտարներու ընտանեկան յարկին և գեղեցիկ ընտանեկան ժամանցներ ունենալու յատկութեան:

Այն ատեն պիտի սկսինք մենք ալ ընտանեկան ճշմարիտ ժամանցներ ունենալ, երբ մեր կիները աւելի ըզրէն գիտակցին իրենց իբր ամուսինին ունեցած մեծ պատասխանատուութեանը և բազմակողմանի կոչմանը:

ՆՍՐԻՉ

ՍԵՒ ԱՆԱԿՆԿԱԼԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

(Շար. Ռախոյր թիւէն և վերջ)

Արամը՛ն՝ մը . . . անակնկալ մը համար, ասիկ աւելի ազնեցոյցիչ անակնկալ մը չի կրնար սպասել:

Այրքան համոզ կերպով սխտած հովուերգութեան մը՝ ասանի տափակ և գունդի վախճան մը տալ, բայց գործարկութիւն մըն էր այս պարզապէս որուն հանդէպ բողբոջու իրատունքն ալ չի կրնար տալ ես ինձի: Ինչպէս, «Քայլիս» այդ հեղ աղջիկը, իր բուն տարիներու չըմբողջութեան և անփորձութեան մէջ, որո՛ւ մտքին կ'անցնէր թէ այնքան կարեւոր վախճան մը պիտի տայ եղեր այդքան աղայօրէն, ասանց կանխամբատութեան սկուտած յարաբերութեան մը որուն մէջ իմ գերս, անցողակի, au pied levé կատարել ուղած էի անշի օրէն իսկ:

Եթէ երբէր կարելի ըլլար ինձի ատուջոց գիտնալ թէ՛ մեր մշակած ծառը . . . պտուղներ ալ պիտի տար, վայրկեան մը իսկ չպիտի վարանէի արմատախիլ ընել զայն, հակառակ մշակութեան համար ունեցած անգուսպ հակումներու:

Առաջին բանի մը օրերը կը կարծի թէ Քայլիսօին ըրածը պարզապէս կատակ մըն էր՝ իր վրայ ունեցած դիտարարութիւններս մուծակելու նպատակով մէջ տեղ նետուած, այնքան դիտարար կոզար հաւատք ընծայել իրողութեան մը որուն մէջ, ինքը կը պնդէր թէ, ահապէս բաժին մը ունեցած էր իմ հիշատակի բայց յանցարար մասնակցութիւնս:

Եւ ճիշդ այդ օրերուն մէջ, հարկ եղաւ ինձի, գործի պատճառով, բացակայիլ Արամընդիպէն զոյգ մը ամիսներու հասար:

Վերագործին՝ այ որևէ կասկած մը ունենալ ներքին չէր:

Այնքան ըլլալ սկսած էր վիճակը որուն մէջ խեղճ ֆալսեթը կը դառնար, վիճակ մը՝ որուն՝ շունչէկալն անակաւոր կուտան պայմանագրական և պատշաճ լեզու մը գործածելու ուղիները:

Օ՛հ, բարեկեցիկ, ահաբեկիչ էր կացութիւնս, ինչպէս կը գուշակէր:

Այդքան հեշտին ստանա մը ատանկ ահաբեկ, սարսափեցուցիչ արդիւնք մը տար. ինչ սե աստղի տակ ծնած էի ես, Աստուած իմ:

Անկարճը արարատ ատանկ անուշ յիմարութիւնները ըրած է, գրոց եկաւ հիմայ ինձի վիճակեցաւ ատանկ անկ ճամբու մէջ գտնուիլ:

Ա՛խ, սա ճարտարագետները, ինչ ըսեմ անոնց, եթէ այդ ապուշները մեր երկուքին պատկած սենեակներուն պատուհանները իրարմէ բնջ մը աւելի հեռու շինած ըլլային ատանկ ձիւն ուրկէջ պիտի գար զիտուս:

«Աճեցէ և բողբոջարուր» աւաթի՛կ ձեզի պատուէր մը, որ զՕՐՈՎ, անդիտակցաբար, malgré moi բռնել տուած էին ինձի պարագաները:

Որքան իրատունք ունի եղբոր այն բարեկամս, որ ինտուտովանանք մտիկ ընելէն ետքը՝ — Օ՛խ ըլլաւ, սպասուհիներու հետ կ'ըլլանս մի, ա՛ն նստել հիմայ, պոռոց երեւոյս:

Աճե՛ւ, նստի՛ւ, բայց եթէ ատով կարելի ըլլար վերջ մը սալ զայնակողութեան մը սր բէշիկ բէշիկ բազաբին շրջանը ընել ըսկասած էր, բայց չէ՛:

— Ինձի պիտի աննես, կը սրտը, Ելլատայի այդ աղջիկը, անկրտուութեամբ մը որուն մէջ իր սպասուհիի աճրոզը ձենձուտութիւնը կը գնէր:

Վերջապէս մտածեցի որ մը. *adviene que pourra*, ինչ որ գրուած է պիտի ըլլայ. դեռ ամիս ու կէս ժամանակ ունիւր, մինչև այն օրը ինչ կըլլայ ինչ չ'ըլլար, մեծնելու չեմ ես՝:

Գործը ամիս ու կէսի չ'մնաց:

Իրիկուն մը, ուշ ատեն, մութ փողոցի մը անկիւնը, երկու յոյն յաղիֆարեաններ, Բայիբօսի մօրքեթորիները. — գոնէ ինձի այս հանգամանքով ներկայացուցին իրենք զիրենք — օձիքէս բռնելով, սպանաչին շան ստատիկ հանել զիս, եթէ երևը օրէն կուտիւն չ'աննի իրենց աղգակարն՝ ծանրաբեռնեալն ֆալսեթս:

Գեղեցիկուն մէն հասկցայ թէ հետերին կատակ ընելիք մարդեր չ'էին յաղիֆարեաններս:

— Գտնուր չորս ժամէն ձեր պատասխանը «ֆալթ տիւ Լուվր» մէջ կ'սպասենք, բսին գէշ գէշ երեսն նայելով:

Ճար չ'կար. յոյներու խոստումին շատ հաւատք չեմ ընձայեր, բայց սպանալիք մը գործադրելու համար անանկ *անկրքըլմէն* են որ . . . :

Մէկ երկու ըսելու ժամանակ չ'կար, որոշում մը տալու էի:

Աստուած թշնամիներու անանկ գիշեր անցնել չի տայ . . . :

Ես՝ հակառակ ծնունդիս, հակառակ ասած գոտախարակութեանս, հակառակ ինձի տրուած ուսմանըն, հակառակ զերբնս, հակառակ իրգներուս, հակառակ աշխարհիկ կուշտիս ստիպուած ըլլալ անունս նուիրել սպասուհիի կտորի մը և խորանին անն զլիսիկոր, թող տալ որ քահանան զընդունու վրայ կարգուր, հարկադրուած ըլլալ սեղմել ձեռք մը՝ որ տակաւին ամիս մը առաջ պընակները կը լուար, օ՛հ, ինչ անկում, ինչ անկում:

Չէ՛, այդքան վար չէի կրնար իջնալ, արեանապատուութիւնս կատարողէն կը բողբոջը ներքի դիս, երակներուս մէջի արեւը՝ ամեթին ջուր կը կտրէր և վիրաւորուած կ'զգայի զիս իմ ԵՄ իս մէջ:

Իրաց այս վիճակին մէջ քանքը ժամ ատանկէն ետքը վերջապէս հերոսական որոշում մը տուի . . . Աղերսանդրիայէն փախայ . . . :

Դեռ անոյն քան օր կար, անշուշտ մինչև այդ պայմանաժամին լրանալը, աւելի լուրջ և պատշաճ որոշում մը կ'ընայի տալ:

Բացի մտերիմ մէկ բարեկամս, ատանց ոչ ոքի լուր տալու շունչս շիտակ Գահիրէ ատի:

Հին հաննելուս քանքը լցնող օրս հետեւեալ հետադրեր ստացայ յիշեալ բարեկամս.

«Բայիբոս օմուր, կրեուս գոյ»
Երբք չպիտի կրնար երեակայել, բարեկամներ, այն մեծ տպաւորութիւնը որ այս չորս բռնորը ըրին վրաս:

Կարողութիւնս շատ վեր է նկարագրել հոգեկան վիճակս այդ օրուան:

Իրարմէ ասրերը զգացումներ, զգացումներ՝ որոնցմէ շատերը անձանօթ էին ինձի մինչև այդ վայրկեանին. մտածումներ՝ որոնց նմանը երբք ուղիղ չէր յղացած, անբարեբեկ յեղաշրջում մը յառաջ բերին իմ մէջս, ես զիս չի ճանչնալ սկսայ, ասոր ընտանի վիճակի մը մտնուած էի՝ ինքզինքս կ'ընդունելու աստիճան:

Շուտաւ մնացի . . . :

Անգամ մը ես փորձեցի կարգալ հեռու գիրը «Բայիբոս օմուր . . .» ինչ խորհրդաւոր, ինչ անպատում բան մը կար այդ երկու բարեկամս մէջ որ աչքերուս արցունքի խոշոր կաթիլները յայտնեցուց, տակաւ վրայ ըրաւ սիրտս ու հոգիս, և ինքզին ատու զըլիւս:

Արամաբէին ճիշորը սուր սուր ականջիս մէջ կը մտնէին կոր և ֆալսեթի սիրախոյզ աչքերը՝ կարծես զիս կը փնտրէին անձանօթ տարածութեան մը մէջ:

— Թշուառական մըն եմ ես, վատ մը, յետինը մարդերուն. ահա՛ ինչ մտածեցի երբորդ, չորրորդ անգամ հետագիրը կարգալու ետքը:

Նախանձութիւնը՝ գերագոյն երջանկութիւն մը կը պարզէր ինձի, և ես՝ փախանակ շտրտակալ ըլլալու իրեն ինձի ցուցուցած այդ անկող բարութեան համար, դեռ կը վարանէի պարտականութիւնս կատարել և փոխանակ ժամ մ'առաջ վաղելու հոն որ՝ մայր և որդի զարտանան ըստ պատելու իրաւունքը ունէին, ես՝ աշխարհաւոր արարած, կը մերժէի այդ երկնապարզ ընձան, և կը շարունակէի մնալ այդ հոգուոյս հատորէն, մշակած ծառիս պտուղէն . . . 210 քիլոմէթրո հեռու:

Եւ յետոյ, ինչ անուշ ըլլալու է թեւորուող մէջ աննել կակ մը որ ուղղակի արբայութեանէն կուգայ, հրեշտակի ժպիտ մը գեւ ունի շրթներուն վրայ և սերովիկի նայուածք մը աչքերուն մէջ. հարաբար ըսել թէ հեղինակին ես այդ բանաւոր գեղորին, զգալ թէ այդ նորը երակներուն մէջ ըստ արեւոյ է որ կը շրջի, ստեղծուած մը ըլլալէ ետքը ստեղծող մը ըլլալ, կարելի՛ էր արդեօք ինձի պէս զգայուն մէկու մը՝ առ ոչինչ համարել այս ամենը և չի փութալ երթալ նստուիլ այս գերագոյն երջանկութիւնը ընդ տուտիս թեւորուն մէջ:

Քաղիքսն այլևս սպասուհի մը չէր ինձ համար, այլ թաղուհի մը, զզջացած Մագթութիւն մը, իր յանցանքին հետեանքովը

բաւեալ կակ մը՝ սիրելի, պաշտելի, երկրպագելի:

.
Ժամք ինր քատանքէնց անցած ելլալուին մէջ գտայ ինքզինքս:

Վրաս շտրտք մը եկած էր, չեմ գիտեր ինչու՛ ծանր, լուրջ երեւալու. փափաք մը կար վրաս. երանութիւն մը կը կուցակեր երեսէս և կը գարմանայի թէ ինչու՛ վախօնին մէջ գտնուող ճամբորդները շտրտածքներէս, զէմքէն չէին գուշակիլ թէ արաստովր բան մը կը գաճար կոր իմ մէջս և կը զարմանայի նոյնպէս թէ ինչու՛ հետքը հեռէ չէին գար ձեռքս սեղմել շտրտածքերէս համար զիս երջանկագոյն օրոտան մէջ:

Արամաբէին — Թե՛ս այդ կանխաւ տրուած անունը պիտի փութի ապագային — արդեօք ինչ աղտոր աղայ մըն էր, Աստուած իմ:

Աս ալ՝ Աստուած Լըպրէս ընէ, ատանկ պարագաներու մէջ կատարութեանը *rapide* ըլլալու եւ, անկէջ ալ աւելի *éclaire*, եթէ կարելի է նոյն իսկ *train-foudre*:

Կ'երթանք, կ'երթանք դեռ թանձիմ ենք. ով գեալ հրեշտակի սրբան կուլայ կար այս պահուս, խեղճ մանկիկ, աղաւթ պղպեղ, ծամ ու կէսն թեւորու մէջ պիտի ըլլաս, մի՛ լար, հոգիս, մի՛ լար:

Թանձիմայն մեկնելուս ամեն բան չտփած չափաբեկ և սրուշում տուած էի:

Քաղիքսն կ'ինս պիտի ըլլար, թագաւորի աղաքներ հոլուտէիներու հետ կարգուեր են, ինչ կ'ըլլայ:

Նստած տեղէս վեր վեր կը ցատկէի կոր, բոսն վայրկեանէն աշխարհք իմս պիտի ըլլար:

Հուստասպէր որ չեմ յիշեր թէ ինչպէս կայարանին զուրս նստուեցայ. մինակ ոս չափը միաքս է որ կատարանին տուի մանկարաճի մը հասցեն որ գիտի թէ ֆալսեթս երկու ամեն ի վեր կը գտնուեր:

Սանդուգներն վեր երած միջոցին, կարծես սիրտս զուրս պիտի ցատկէր բերնէս, շունչս բռնուիլ սկսաւ, սրտիտութեան խեղքս պիտի թոյնէի:

Սպասուհի մը գեւս կուս, սրմէ ինչորեցի Բայիբոսի սենեակը ինձ ցուցանել:

Ծուռ ծուռ երեսն նայելէ ետքը, մատովը՝ սանդուգներուն ճիշդ դիմացի գուռը մտանանիչ ըրաւ:

Չերմեանագութեամբ գուռը բացի և մտայ ներս:

Ինչ վարագոյններու ետեւէն, արին ճառագայթները՝ անհամար ներս թափանչած՝ մեղմորէն կը լուսաւորէին մահահակ մը սրուն բարձին վրայ, Բայիբոսի՛ մայրական լուսապատկով սղաղուած զընիւր կը հանգչէր:

Սրտատրոփ մտանցայ անկողնոյն և զինքը արթննելէ զգուշանալով, կամացուկ մը վերմակը վեր առի հոգեհատորիս երեսը զիսկուս համար:

.
Օ՛, Աստուած իմ . . . ինչ անհամար աղէկ. անուիկ կտոր մը, շոխոյն յալիք մը, պերպրիկ սե լակիտ մը՝ մշիկ մշիկ կը բընանար կոր . . . :

Ամենայն երկիւղածութեամբ վերմակը վրան բաշխել և ատանց ետիս դաճալու գուրս ելայ:

Մտաբն, մեր երեւմիկ սե նախանաւ մտիւնը, ուզուածէն աւելի զիբացուցած էր մեր յարաբերութիւնները, թշուառականք:

Յ. ԱՎՓԻԱՐ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Շէկ-Էմմանի ծանր ինչորոյն վրայ ինտ շահեկան և ազգային շահերուն նըպատաւը տեղեկութիւններ պարունակող թղթակցութիւն մը ստացած ենք այսօր Իրազեկ աղբիւրէ մը, զոր տեղի անձիւթեան պատճառաւ, մեր յաջորդ թուով պիտի հրատարակենք:

— Կը յիշեցնենք «Նոր-Օր» ընթերցողաց թէ վաղը զիշեր տեղի պիտի ունենայ թերթիս վարչութեան կողմէ կազմակերպուած երեկոյթը ի նպատակ զիշերային պատասխանութիւններու հաստատման:

«Վարկէթ» թատրոնին ամբողջ օթեակները և թիկնաթոռները մեծաւ մասամբ արգէն վաճառուած ըլլալով, կրնանք սպասուիցնել թէ այդ երեկոյթը թէ հետաքրքրական և թէ գուարճալի ժամանց մը պիտի ընծայէ ներկաներուն:

. . . Թմարգութիւն
«Նոր-Օր» լրագրոյ

Աստ

Վազարականի Որբանամ ընկերութեան տարեկան ընդհ. յողովը ներկայ տարւոյս փետրուար 3ին մեր նախագահութեան ներքե տեղի ունեցած և Մայր-Գիւնի, ինչպէս նաև Գործադիր յողովոյ նորագ ընտրութիւն կատարուած ըլլալով, արդիւնքը ձեզ կը հաղորդենք ի հրատարակութիւն, պատասխան թերթի՛կ միջոցաւ:

Մայր-Գիւնը կազմուած է հետեւեալ կերպով:

- Տեսրք
Մ. Առանեանց Ա. Ասեմայիս
Յ. Արիտար Բ.
Յ. Սիւրեան Ա. Ասեմայիս
Օ. Խնաման Բ.

Ինչ Գործադիր ժողովոյ անգամ բնութում են

- Տեսրք
Գ. Խազուկան Ասեմայիս
Լ. Բանագեհան Ասեմայիս
Ե. Աւպեան Գանձայիս
Մ. Սոսիկան Հաշուակոյ
Ա. Փափազեան Խորհրդակալ
Տ. Պատարեան
Բ. Աւագան

Մնամբ ապօրարար
Առաջ. Եղիպ. Հայոց
ՅՈՎԱԷՓ ԵՂԻՍԿՈՊՈՍ

ԹԱՏՐՈՆ «ՎՈՒՆԻԹԷ»
ԳԱԶԻԷ ԷՋՄԷՔԻՅԷ

Հիւնզարթի 28 Մարտ երեկ ժամը 9 (Ը. Ծ)
ԱՐՏԱՐՈՆ ԿԱՐԳԻ ԵՐԵՎ ԵՐԵՎՈՅ

Կարգադրութեամբ

Պ. ԲՆԻՄԱՆԹՅՈՅՆԻ

Խոտալական-Իրիկեան հանրաժանութիւն
Լարախաղաց խումբին
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

16 ՆՇԱՆԱՌՈՐ ԱՐՈՒԵՍՏԱՆԳԷՏԵՐՈՒ

Կուլտուրայի նախաձեռնութեամբ

«ՆՈՐ-ՕՐ» Վարչութեան
Ի ՆՊԱՍՏ

Գիշերային ճիբ դատարանի հիմնադրութեան

Ձիու, փիղի, շամ, կալիս խաղեր — Լարախաղաց տեսարաններ — Գիւնթիւթի վրայ փորձեր — Գօ-Գի — Հակոտեան խաղեր — Բանթոմիւ — Մեծ գալլէթ գոր պիտի վարեմ Օր - Ուէտաթօմի և Գ. Վալտմար:

Խոտալական շուրջաձուլաց խումբ մը մըշտ պիտի նուագէ:

Գին
Օթեակ. 150 Դաճ. Ողջ
Թիկնաթոռ. 20 » »
Կալըրի. 8 » »

Տոմսակները ծախու զրուած են Շարա-Ապուէլ-Ազիզ Գ. Երզնկացիի խաճու-թը:

լուծեն չկարողացաւ: Այս տեսնելով մտաւ զայն արտաւն և լինեն բնած վեր վերացուցի:

Գիտարութեամբ ոտքի վրայ կանգնելով, բառ պատար տանկերէն:

— Զօք բազիլիքով, եճեկնիս: Աղան յօք սաղիլիք շինուին ճեկնաղիլիք:

— Մի՛ կարծիք թէ սա տանկի է, առայ ինձ անցողիքս անող սրաշունհան, այլ խոկան մի յայն կին է, բայց յո՞նարէն և ոչ մի բառ չը գիտեր: Կորա համար ևս անցողիք սրաբառուտեալ եմ:

Ո՛ր կ'երթայ այս պատար, հարցոցի պաշտօնէն:

— Մանթ-Ալիս: Սորք Աֆանի վանքեր:

— Տեղական տանկաց հիւստարոն նորա անցողիքը կը վաւերացնէ:

— Այո՛, պատարաննեց նախնորդեանի պատանան պաշտօնեան:

— Հասցա ինչո՞ւ իմ անցողիքը ո՛չ Սեւ վաստաղի հիւստարոն և ո՛չ ալ Սիմֆերոպոլի չեն ուզի վաւերացնել, պատանաւորանելով իմ Հայ լինելը: Տանկահար տանկերն ազատութիւն կը թողարարէն որ Ռուսաստան մտնեն: Բնուսց կառավարութիւնը այնպիսեաց սրէ կ'առարարէին կը հանէ, կ'արդիւն էր Տանկաստանի մէջ եղող հիւստարոններին վաւերացնել տանկահարտանկերի անցողիքը:

— Ո՛չ:

— Բանի որ Ռուսաց կառավարութիւնը իր հպատակին Տանկաստան երթալու անցողի կուտայ, պէտք չէ որ տանկաց հիւստարոններ այդ տեսակ անցողիքը խոխոխ վաւերացնեն: Չվաւերացնող Ռուսաց կառավարութեան անարգած չի լինիր, բանի որ Ռուսահարտանկ անցողիքի անը ո՛չ իւր ակրութեան և ոչ ալ տանկի ակրութեան տաճ սեկ յանցանք գործած չէ: Այսպիսի ժամանակ պէտք չէ միթէ Ռուսաց կառավարութեան միջամտել Տանկի հիւստարոնների անարգ ու անիրաւ գործողութեանց մէջ որոշմով նորա թէ՛ Ռուս կառավարութիւնը կ'անդատուն և թէ՛ նորա հպատակները: Ինչպէս կը տեսնէք, իմ անցողիքը երբ սայլմ գիտցալ բախտայ ուխտաւորի անցողիք է: Ինչ հիման վրայ և ինչ ասորոնեակ համարձակութիւն է Տանկի հիւստարոնների կողմ Ռուսաց կառավարութեան տաճ անցողիքը չի վաւերացնել...: Կը սիրենք յուսալ որ Ռուս կառավարութիւնը այսպիսի պարագաներու մէջ պաշտօնան թէ իր պատիւը և թէ իր յանցանքը չգործած հպատակը...:

Միթէ Հայ և Երբուսպոլի սխաւար լինելով յանցանք գործող Ռուս կամ Տանկի ակրութեան գիմաց...:

— Մենք չենք խառնուիր Տանկի կառավարութեան ներքին գործերին մէջ: Չեւ լաւ կը թուի եթէ ևս խառնուիմ կամ միջամտեմ ձեր գերդաստանի գործերին մէջ: Ինչպէս մի տանակը լիակատար իրաւունք սեկ իր տանին մէջ չ'ալ կամենայ հիւր ընդունիլ, այնպէս ալ Մուսլիմի կառավարութիւնը լիակատար իրաւունք ունի իւր տանին մէջ չ'ալ կամենայ հիւր ընդունիլ չ'ալ կամենայ, պատարաննեց անցողիքը բանաղ պետական պաշտօնեան:

Այս տեսնելով արամազրութեան տակ հեռացայ նախնորդեանի գիւտնատունէն, ըստանալով նոր Երբուսպոլի գիտար անցողիքը և շատաղ գիմեցի Ար: Տղաքնեանի տանը, որ ճաշելէ յետայ, հրաժեշտ արարի ներկայ եղողներին և ճանապարհուցայ Սեփաւաղով:

ՍՐ. ՔՆՆ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ (Շարունակելի)

Ա. Զ. Դ.

Եղիպտոսի, Արտասահմանի և կալիկասի արդոյ բաժանորդներէն անանք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդադիմները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Էզրիպտոսի բաժանորդները կրնան Մանտո-Քոսթալ ուղարկել իրենց բաժանորդադիմները. լծերթիս վերելը նշանակուած հասցէին:

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԳԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, որ շատ մը զուարճայի և օգտակար հատուածներու հետ կը գանտի նաև զեղեցիկ բազդապոյց մը սէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյցը գնել փափարոյք լծող հաճին գիմել առ Տ. Օհան Խնամեան, որ պատրաստ է արիւշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնը փոխով կատարել փոքրիկ կանխավճարով մը:

Երկուկայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրովի տեղ լծող լծողը՝ կընդունալ:

Տարեցոյցին գինը	10 Դր. օղ
Պարզ օրացոյցինը	2 "

Ա. Զ. Դ.

Շատերու կողմէ յայտնուած փափարքը մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրտ լինելը մը ընծայելու նպատակով, ոչուհեան մեր լծերթը հատով պիտի ծախուի Շարա Ապու-Էլ-Ազիզի սկիզբը Պ. ԿՈՐԱՊՏԵՆ ԵՐԶԵՆԿԱՅԵԱՆԻ խոնարհ ինչպէս նաև Գրք-Պէլ, փոքրիկ ծախք և լծարած գիներու կայարանին մօտ ծխալուծու Պ. ՄՍՐՏԻՐՈՍ ԳՅՍՍՊԵՆԻ ըրով:

Le Gérant J. MUNIER

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԾԱԿՈՒ ԵԿԳՏՈՍ

Մ. ՍՍՍՅԵԱՆ

Լիոնի հանրաժողովրդականութեան, այս անգամ՝ անկուս իւր Եզրիպտոսի գործակալն ալ Տ. Մկրտիչ Սոսոյեան, որ իւր հրատարակչին ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վաստակութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքագիտութիւնէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնեզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և ֆուէրի ֆոնդիէր, վիլ աը Բարիի և Գազդիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Ամսական չնչին գրանցի մը ինչպէս լծեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեկիցի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարոյցները հաճին գիմել Ներպատի վրայ փաստարան Ռարթարիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրով գրելիւ հետեւեալ հասցէին:

Մ. ՍՍՍՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՍՏՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈՒԿԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ աը լա Պարտի կեց, Բ. յարկ լծի 9 գոտիկանը:

Կը բժշկէ բերնի և տկուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազգրասները ձրի կը գործանէ ամեն օր, առատուան ժամը 8էն 9:

ՊԵԼԱԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ ԱՐԱՆՆ ԵՒ ՏԻԿԱՆՆ ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապիտի մեծ սլոգոսային վրայ Տայիւայի Սանիթի ղիւնացը, ճախկին ելիսրական գործիներու վաստասուներ:

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան լծի պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պատ. յանախորդները, գործի մարութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտահարութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան գասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամանութեանց համար գիմել մեր գործատեղին:

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԴԱՋՈՒՃԵԱՆ

Շարա Ապու-Սալան

Նիսու-Տիւրքիայի գիւտնակին գիմացը:

Օրատան ու զուարճայի գիրք մարտ ու վայելուչ ապաս համեզ ու անդարտ կերակուրներու զանազանութեան, անխորոջայի պատրաստութեան ճոխ ճաշացուցակ մը գիրք մասշտիլի գիներով ահա՛ Գազանձեան եղարոյ ճաշարանը:

Ով՛ որ կ'ողէ, փորձի համար մէկ անգամ լծող գիմել, վաստ ուղտը է ըլլայ լծի մշտակայ յանախորդը պիտի գաւնայ հայկական ճաշարանին:

Տպու. «Միւրիս».— Թ. Ս. Փափարկեանի

Տ Պ Ա Ր Ա Ն

Մ Ե Ա Թ Ե Թ Ե Թ Ե Ն

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակաղմ ապարանին մէջ կը սպասին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յարտարարութիւններ, չըջարեականներ, այլեւտաներ, մահազգր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագրիներ, նամակաղբիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ են:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճաշակատար սպազորութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ